

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 08

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ
06.02.2014թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 58 անդամներից ներկա էին 43-ը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 2014թ. նախահաշվի քննարկում:
Զեկ.՝ ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան
2. Բուհի զարգացման ռազմավարական ծրագրի (2015-2019թթ.) քննարկում:
Զեկ.՝ գիտական խորհրդի որակի ապահովման և վերահսկման հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ս. Սարգսյան
3. ԳՊՄԻ-ի միջին մասնագիտական կրթության բաժնի և ավագ դպրոցի զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրերի հաստատում:
Զեկ.՝ ԳՊՄԻ-ի միջին մասնագիտական կրթության բաժնի վարիչ Կ. Այվազյան, ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի տնօրեն Մ. Կարապետյան
4. Դոցենտի գիտական կոչում շնորհելու հարց:
Հաղ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյան
5. **Ընթացիկ հարց:**
 - 5.1 Ինստիտուտի համար 1 հատ նոր ծառայողական ավտոմեքենա ձեռք բերելու համար ԳՊՄԻ-ի 2014թ. նախահաշվում որոշակի գումար նախատեսելու հարց:
Հաղ.՝ ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան

Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 43 անդամներ. կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. **ԼՍԵՑԻՆ.**- «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 2014թ. նախահաշվի քննարկում (**Զեկ.**՝ ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ս. Սարգսյանը ցանկություն հայտնեց, որ հնարավորության դեպքում հետագայում բյուջեում ներառվեն բուհի հարատարակչություն բացելու համար անհրաժեշտ ծախսերը:

Վ. Գրիգորյանը նշեց, որ մի քանի անգամ հորդորել է արտաքին կապերի բաժնի վարիչին, որ զբաղվի ծրագրի որոնմամբ, որի օգնությամբ թեկուզ համաֆինանսավորման տարբերակով հնարավոր կլինի բացել սեփական հրատարակչությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Տալ հավանություն «Գյումրու Ս. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 2014թ. նախահաշվի նախագծին:

2. «Գյումրու Ս. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 2014թ. նախահաշվի նախագիծը ներկայացնել ԳՊՄԻ-ի խորհրդի հաստատմանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 43 անդամներ. կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ.-

Բուհի զարգացման ռազմավարական ծրագրի (2015-2019թթ.) քննարկում (Ձեկ.՝ գիտական խորհրդի որակի ապահովման և վերահսկման հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ս. Սարգսյան):

Ս. Սարգսյանը նշեց, որ իրենց հանձնաժողովի առջև բավականին լուրջ խնդիր է դրված եղել: Հատկապես սկզբում դժվար է եղել որոշել, թե որտեղի՞ց սկսել և ի՞նչ ձևով բուհի զարգացման ռազմավարական ծրագիրը կազմել: Ըստ նրա՝ փիլիսոփայության լեզվով ասած՝ տարբեր բուհեր տարածության և ժամանակի հարթությունում տարբեր դիրքեր են զբաղեցնում, և նախ պետք էր որոշել մեր բուհի տեղը: Ռազմավարական ծրագրի 10 հարցերից յուրաքանչյուրի հանդեպ մշակվել է յուրօրինակ մոտեցում: Խմբային քննարկումների օգնությամբ վերանայվել են բոլոր կետերը: Ծրագրի վերջնական տարբերակը բավականին հասուն է, իրատեսական: Իհարկե, ոչ պակաս բարդ խնդիր է լինելու ռազմավարական ծրագրի իրականացումը, և եթե դա հաջողվի, ապա ժամանակի և տարածության մեջ ավելի լավ դիրքում կհայտնվի ինստիտուտը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը նշեց, որ հսկայածավալ աշխատանքների իրականացման անհրաժեշտություն կա:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Տալ հավանություն «Գյումրու Մ. Նալբանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի զարգացման ռազմավարական ծրագրին (2015-2019թթ.):

2. «Գյումրու Մ. Նալբանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի զարգացման ռազմավարական ծրագիրը (2015-2019թթ.) երաշխավորվել ԳՊՄԻ-ի խորհրդի հաստատմանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 43 անդամներ. կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի միջին մասնագիտական կրթության բաժնի և ավագ դպրոցի զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրերի հաստատում (**Զեկ.**՝ ԳՊՄԻ-ի միջին մասնագիտական կրթության բաժնի վարիչ Կ. Այվազյան, ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի տնօրեն Մ. Կարապետյան):

Կ. Այվազյանը և Մ. Կարապետյանը վերլուծեցին իրենց կողմից կառավարվող կազմակերպությունների ներքին առավելությունները և թերությունները, ինչպես նաև արտաքին սպառնալիքները և հնարավորությունները: Ներքին և արտաքին միջավայրային վերլուծությանը հաջորդեց կազմակերպությունների ցանկալի ապագա վիճակների և դրանց հասնելու ռացիոնալ ուղիների ներկայացումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ԳՊՄԻ-ի միջին մասնագիտական կրթության բաժնի և ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրերը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 43 անդամներ. կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.ԼՍԵՑԻՆ.- Դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը: Մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներին:

Դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին.

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Զնայնացված կարգավիճակը բուհի կառուցվածքում	Գիտական աստիճանը, մասնագիտության թվանիշը /դոցենտի կոչման համար/
1.	Վարդան Ֆրանցի Մանուկյան	Ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի ասիստենտ	Ա.02.04 – «Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա»
2.	Լուսիկ Հենրիկի Ղուկասյան	Մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ, ասիստենտ	ԺԳ.00.01 – «Մանկավարժության տեսություն և պատմություն»
3.	Վարդուհի Միշայի Ստեփանյան	Ֆրանսերեն, գերմաներեն և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ, ասիստենտ	Ժ.01.07 – «Արտասահմանյան գրականություն»

Դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին որոշում կայացնելու համար անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն, որի կազմակերպման համար ընտրվեց 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ազատ Մաթևոսյան, Վալերի Խաչատրյան և Հենրիկ Դրմեյան:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց փակ գաղտնի քվեարկության հետևյալ արդյունքները.

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Վոտ	Դեմ	Անվավեր
1.	Վարդան Ֆրանցի Մանուկյան	43	0	0
2.	Լուսիկ Հենրիկի Ղուկասյան	42	1	0
3.	Վարդուհի Միշայի Ստեփանյան	42	1	0

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը, մանկավարժության ֆակուլտետի դեկան Ռ. Մարդոյանը, նախադպրոցական և տարրական կրթության մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ Լ. Հակոբյանը, ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների

ամբիոնի վարիչ Հ. Դրմեյանը, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ն. Ավետիսյանը, փիլիսոփայության և հասարակագիտության ամբիոնի վարիչ Հ. Հարոյանը, բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ս. Սարգսյանը:

Ռ. Մարդոյանի խոսքերով՝ մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ Լուսիկ Ղուկասյանը չափազանց խստապահանջ, պատասխանատու և աշխատասեր անձնավորություն է: Ներկա պահին նա սոցիալական մանկավարժության դասագրքի համահեղինակ է, որն իր տեսակի մեջ առաջինն է լինելու Հայաստանում: Նաև հավելեց, որ վերջինս ունի բարձր մարդկային որակներ, որոնց շնորհիվ վայելում է և՛ ուսանողների, և՛ դասախոսների հարգանքը:

Լ. Հակոբյանը Լ. Ղուկասյանին բնութագրեց որպես պատասխանատու, բանիմաց դասախոսի և որպես հրաշալի ամբիոնի ղեկավարի:

Հ. Դրմեյանը խոսեց Վարդան Մանուկյանի մասին, ով ներկայումս զբաղեցնում է ամբիոնի ասիստենտի պաշտոնը: Նա բնորոշեց Վ. Մանուկյանին որպես բարեխիղճ և պարտաճանաչ աշխատակցի:

Վ. Գրիգորյանի և Հ. Հարոյանի համոզմամբ՝ Վ. Մանուկյանը ուշացումով է ներկայացվել դոցենտի գիտական կոչման շնորհմանը:

Ն. Ավետիսյանը ընդգծեց Վարդուհու «Վահե Քաչա» մենագրությունը, որը լուրջ գիտական աշխատանք է: Նրա համոզմամբ՝ Վ. Ստեփանյանը մեծ պատասխանատվության զգացում ունեցող երիտասարդ գիտնական է:

Ս. Սարգսյանը Վ. Մանուկյանին բնորոշեց որպես բավականին լուրջ գիտական աշխատող, ում հոդվածները հրատարակվել են ԳՊՄԻ-ի «Գիտական տեղեկագիր» հանդեսի համարներում:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

- 4.1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:
- 4.2. Վերոնշյալ հավակնորդներին շնորհել դոցենտի գիտական կոչում:

5. ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարց:

5.1 ԼՍԵՑԻՆ.- Ինստիտուտի համար 1 հատ նոր ծառայողական ավտոմեքենա ձեռք բերելու համար ԳՊՄԻ-ի 2014թ. նախահաշվում որոշակի գումար նախատեսելու հարցը (**Հաղ.**՝ ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի այժմյան «ԳԱԶ-3102» մակնիշի ծառայողական ավտոմեքենան ձեռք է բերվել 2006թ. օգոստոս ամսին և այս տարիներին, լինելով միակ ծառայողական ավտոմեքենան, կատարել է մոտավորապես 350 000 կմ վազք և ենթակա չէ հետագա շահագործման: Քանի որ վերջինիս վերանորոգման հետ կապված ծախսերը կապված են մեծ գումարի հետ, ինստիտուտի 2014թ. նախահաշվում նախատեսել որոշակի գումար՝ 1 հատ նոր ծառայողական ավտոմեքենա ձեռք բերելու համար:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 43 անդամներ. կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան